

ՆԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ԳԻՐՔԸ

Ավետիք Իսահակյանը և գիրքը իրապես անսպառ թեմա է. այն ունի բազում ասպեկտներ՝ Իսահակյանի վերաբերմունքը գրքին, Իսահակյանն ընթերցող, Իսահակյանի անձնական գրադարանը, Իսահակյանի հրատարակած գրքերը և գրքեր Իսահակյանի մասին: Եվ սակայն ինչ ասպեկտով էլ մոտենաս այս խնդրին, կա մի անառարկելի ճշմարտութուն, գիրքը Իսահակյանի համար սրբութուն է:

Ալեքսանդրապոլում՝ հայրական տանը, կար բավական հարուստ գրադարան, մի շարք գրքեր դեռևս պապի՝ Նիկողայոս աղա Իսահակյանի անձնական հավաքածուից էին, դրանք բերվել էին Հին Բայազետից: Հայտնի է, որ պապը՝ Նիկողայոս աղան, ունեցել է գրելու ձեռք, տիրապետել է նաև աշուղական արվեստին, թառ է նվագել և երգել իր հորինած երգերը:

Ցավոք, 1828 թվից Բայազետից Շիրակ գաղթի ճամփաներին կորել է Նիկողայոսի բանաստեղծությունների ստվար տետրը՝ գրված գրաբար: Սակայն որոշ գրքեր պահպանվել էին և հիմքը կազմել ալեքսանդրապոլյան տան գրադարանի:

Այդ գրքերի թվում էին՝ Գրիգոր Նարեկացու «Գիրք աղոթից», Կ. Պոլիս, 1726, տպ. Գրիգոր Մարզվանցու, «Գիրք աղոթից», Կ. Պոլիս, տպ. Մարտիրոս Սարգսյանի, 1727, Պաղտասար Դպիր, «Տաղարան», Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարզվանցու, 1723, «Դաշտիկ ծաղկալի», Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 1727, Ներսես Ենոքյան, «Յիսուս որդի», Պետերբուրգ, 1785, Մովսես Խորենացի, «Գիրք Պիտոյից», Վենետիկ, տպ. Ս. Ղազարի, 1796, Հակոբ Շահամիրյան, «Որոգայթ Փառաց», Մադրաս, տպ. Հակոբ Շահամիրյանի, 1773:

Գրադարանի հպարտութունն էր կազմում Ոսկան Երևանցու՝ Ամատերդամում 1666 թ. հրատարակած Ա[ստուա]ծաշունչ, Հնոց և Նորոց Կտակարանաց՝ Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրու-

Թյունը: Հարկ է նշել, որ այս փառահեղ գիրքը այսօր էլ պահպանվում է մեր տանը:

Գիրքը միշտ գնահատված է եղել իսահակյանների տոհմում, սակայն բոլոր զավակներից առավել գրքասիրությամբ աչքի էր ընկնում Նիկողայոս աղայի ավագ որդու՝ Սահակի կրտսեր զավակը՝ Ավետիքը:

Սահակ աղան՝ Ավետիքի հայրը, բաժանորդ էր Ստեփաննի խմբագրած «Հայկական աշխարհ» ամսագրի, որի պատկերազարդ համարները սիրով էր դիտում պատանին: Որպես օրենք՝ ամեն երեկո իսահակյանի հայրը հատվածներ էր կարդում Նարեկից կամ Աստվածաշնչից:

Ծանոթությունը գեղարվեստական գրականության հետ սկսվել է հայ դասականների գրքերի ընթերցումով՝ Պերճ Պռոշյան, «Սոս և Վարդիթեր» (Երևան, տպ. էմին Տեր-Գրիգորյանցի, 1887), Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի», Ղազարոս Աղայան, «Երկու քույր», Պատկանյանի, Ալիշանի, Սմբատ Շահազիզի, Ծատուրյանի և Հովհաննիսյանի բանաստեղծությունները:

Գրաճանաչության նախաշեմին իսահակյանը սկսեց կարդալ երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն, քանզի 1893-ին, երբ փակվեցին հայկական դպրոցները, իսահակյանը դեռաց Ալեքսանդրապոլի քաղաքային դպրոց, որտեղ ուսուցումը ռուսերենով էր, այնպես որ ռուսերենին նա տիրապետել է շատ վաղ հասակից և հետագայում ավելի կատարելագործեց այն ռուսերեն գրքերի ընթերցանությամբ: Գրքերին լեռնյանը իր հոշերում գրում է, որ պատանի իսահակյանի համար Ալեքսանդրապոլում ամենասիրելի վայրը գրախանութներն էին: Նա գիտեր բոլոր նորությունները, որոնք ստացվում էին Թիֆլիսից, Բաքվից, Ռոստովից, ժամեր շարունակ լինում էր այդ խանութներում, կարդում, պրպտում, և եթե ձեռքը փող էր լինում, գնումներ կատարում: Նրա եղբայրներից գրասեր էին ամենամեծը՝ Ալեքսան աղան, և իրենից նախորդը՝ Մկրտիչը, բայց Ավետիքը բոլորին գլեց-անցավ, ընդամին նա ոչ միայն նվիրյալ կարդացող էր, այլև հավաքող: Նրա համար պատանի հասակից մարդկային երջանկություն էր ունենալ իրած գիրքն իր ձեռքում, իր գրադարանում: Նա տասնապատկեց, հարյուրապատկեց հայրական տան սկզբնական գրադարանը: Հայրը՝ Սահակը, շուտ մահացավ՝ 1890 թվին, երբ իսահակյանը երկրորդ տարին էր, որ

Գեորգյան ճեմարանի սան էր, և այնուհետև նրա կյանքի խորհրդատուն դարձավ գիրքը: Այդ գիրքն էր պատանի ճեմարանականի առջև բացում մեծ աշխարհի լայն լուսամուտները, Հնարավորություն տալիս, թե տալիս պատանի բանաստեղծի վառ երևակայությանը սավառնել ներկայում և ապագայում, ճանաչել ազգեր ու նրկրներ: Այդ գիրքն էր սփոփանք տալիս Շուշանիկի անբաժան սիրուց տանջվող պատանուն, այդ գիրքն էր բացում մարդկային ոգու սխրանքի ու Հանճարի անսահման խորությունները:

Իսահակյանը խոստովանել է, որ պատանի Հասակում իր գիտցածի, սերտածի, իմացածի Համար պարտական է նախ և առաջ իր մորը, Հետո՝ գրքին:

Նրա կյանքի ամենահիշատակալից պահերից մեկը եղավ, երբ 1898 թվի Հունվարին ձեռքն առավ իր առաջին տպագիր ժողովածուն՝ «Երգեր ու վերքերը» (Ալեքսանդրապոլ, Գեորգ Սանոյեանց տպարան, 1898): Այսուհետև իր գրած, ստեղծած գիրքն ուներ, և նա կարող էր Հպարտանալ այդ գրքով:

Անմեկին զգացմունք մեծ գրասերի Համար, այսուհետև նրա կյանքը նոր իմաստ է ստանում, քանզի այդ փոքրիկ, ընդամենը 64-էջանոց գրքի միջոցով նրա անունը դառնում է սեփականությունը ողջ կարդացող Հայության, գիրքը դառնում է Իսահակյանի դեպպանը աշխարհում: Եվ Հրաչքն իրապես տեղի է ունենում, այդ «Երգեր ու վերքերի» շնորհիվ է, որ ընդամենը մի կարճ Հատվածում պատանի ալեքսանդրապոլցին ձեռք է բերում Համաժողովրդական ճանաչում, դառնում սիրված ու փնտրված Հեղինակ:

Գրքի Հրատարակությունից Հետո Իսահակյանը մեկնում է Թիֆլիս և անձամբ գիրքը Հանձնում մեր գրականության մեծերին՝ Պոռոյանին, Աղայանին, Թումանյանին: Եվ Թիֆլիսում էլ (ինչպես, ի դեպ, աշխարհի որ քաղաքում էլ բանաստեղծը ապրած լիներ) նրա ամենասիրելի վայրն են դառնում քաղաքի գրախանութները: Ավելորդ է ասել, որ մոտը եղած Համեստ գումարն ամբողջությամբ թողնում է Թիֆլիսյան գրախանութներում, սակայն փոխարենը մի ստվար արկղ՝ իր ընտրած գրքերով, Հարստացնում ալեքսպոլյան գրադարանը: Այդ գրադարանի որոշ մասի՝ ուսսերեն գրքերի Հավաքածուի ցուցակը կազմել էր Իսահակյանի եղբոր որդին՝ ապագա բանաստեղծը և Կաղզվանի Հերոսը՝ Իսահակ Իսահակյանը: Այն կազմել է 360 անուն գիրք. այս թիվն արդեն շատ բան է ասում,

քանզի ռուսերեն գիրք հավաքել էր միայն ինքը՝ անկախ պատվից և հորից:

Հարկ կա՞ արդյոք գրել, որ ձեռքն ընկած ամբողջ դրամը երիտասարդ բանաստեղծը տալիս էր գրքերին: Միակ խանդարող հանգամանքը, որ ավելի ստվար չի եղել Իսահակյանի գրադարանը, եղել է դրամի պակասը, և այդպես ողջ կյանքում, հիբավի կյանքի վերջին տասնամյակում միայն Իսահակյանը նյութական անապահովություն չի գգացել: Այնպես որ մենք կարող ենք ասել, որ Իսահակյանի գրադարանի յուրաքանչյուր գիրք նրա գրողական վաստակի մի մասնիկն է: Այսպես խնամքով ու գուրգուրանքով էր նա հավաքում իր անձնական գրադարանը: Եվ նրան ուրախություն էր պատճառում, որ պապի և հոր գրադարանի կողքին նա ստեղծում էր իր գրադարանը: Ծնարիտ գրողի և՛ գեները, և՛ զորանոցը: Առաջին վկայությունը Իսահակյանի գրադարանի մասին մենք հանդիպում ենք Դերենիկ Դեմիրճյանի «Հուշերում»։ «Ավետիքն ունեւ մի փոքրիկ, բայց շատ բովանդակալից գրադարան: Գրքերի մեջ առաջին գործածություն առարկա էին դարձել նրա համար այն ժամանակ համալսարհային էպոսների տեքստերն ու նրանց մասին ուսումնասիրությունները — գերմաներեն: Ավետիքը ուսումնասիրում էր ժողովուրդների էպոսը»:

Դեմիրճյանը գրում է 1899 թ. մասին. արդեն հետևում էր Լայպցիգը, որտեղ Իսահակյանը կատարելապես տիրապետել էր գերմաներենին: Սակայն Դեմիրճյանի նկարագրածը Իսահակյանի գրադարանի մի մասն էր միայն, պահպանված մասը: Երբ 1896 թվին Իսահակյանին Ալեքսանդրապոլի կայսրանում ձերբակալում են, լուրը հասնում է Ղազարապատ, և Իսահակյանի հարազատները ողջ գիշեր շիկացած վառարանում այրում են բազմաթիվ գրքեր, որոնք կարող էին մեղադրանք հարուցելու պատճառ դառնալ: Եվ երբ լուսադեմին կաղնի-ոստիկանները ներխուժում են ղազարապատյան տունը, տակն ու վրա են անում գրադարանները և խիստ հուսախաբ լինում՝ չգտնելով որոնած գրքերը:

Այսպես իր առաջին ավերումն ապրեց Իսահակյանի գրադարանը: Ի տարբերություն մյուս մեծ գրքասերի՝ Հովհաննես Թումանյանի, որի կյանքը հիմնականում անցավ միայն մի քաղաքում՝ Թիֆլիսում, և նրան հաջողվեց անխափան ու անկործան իր գրադարանը հավաքել, Իսահակյանի կյանքը մեծ պանդուխտի, թափա-

ռական բռնադատիկի դասական օրինակ է, և նրա գրադարանն էլ իր կյանքի յուրահատուկ Հայելին է:

Միայն զարմանալ կարելի է, թե ինչ Համառությամբ է նա ստեղծել իր գրադարանը: Բանաստեղծը Հավաքել է գրքերը, ճակատագիրը ձեռքից խլել և այդպես շարունակ: Հիշում եք «Հիշատակարանում», երբ նա Լայպցիգից վերադառնում էր Հայրենիք 1895 թ. Հունիսին, սահմանադրված ռուս ժանդարմերիայի աշխատակիցները բռնագրավում են նրա գրքերը՝ այդպիսի դժվարությամբ (Հաճախ օրվա հացի փոխարեն) ձեռք բերված երիտասարդ բանաստեղծի կողմից. «Այսպես խաբեց ռուսաց կառավարությունը ինձ, նրա սարքն ու կարգը կերան, ոչնչացրեցին իմ արտասովոր Հիշատակարանները, իմ զգայուն ոտանավորները, և իմ բլից ու բերնից զրկված կոպեկներով գնված Հարյուր ռուբլու արժեքով գրքերը»:

Հետո՝ 1896 թվի մայիսին, բանաստեղծի ձեռագրաված զուգընթաց կրկնակի խուզարկումներ Գյումրիի Հայրական տանը և Ղազարապատում: Վերջինիս գրադարանի ավերման մասին Աբաս Իսահակյանը գրել է իր հուշերում:

Սակայն բանաստեղծի գրադարանի հիմնովին ավերումն առջևում էր. այն տեղի ունեցավ Գյումրի՝ թուրքերի ներխուժման և ապա խորհրդայնացման շրջանում՝ 1920-1921 թթ.: Իսահակյանի Հայրական տունը խորհրդային իշխանությունները պետականացնում են, իսկ գրադարանը բռնագրավում: Նորելուկ իշխանությունների բարբարոսությունը հասնում է այնտեղ, որ չբավարարված այն իրողությունը, որ Իսահակյանի գրքերի մեծ մասը Հանձնել էին Ժողկոմլուսի Հայեցողությանը (Հետագայում այդ գրադարանի պատկառելի մասը անցավ նորնախիջևանցի սոցիալ-դեմոկրատի անունը կրող Գյումրիի մանկավարժական ինստիտուտին), իսկ մյուս մասը պարզապես ոչնչացրին Գյումրիի շուկայում, ինչպես պարկերով գետնախնձորը առուծախի հանելով. այսպես էր հաստատվում նոր իշխանությունը, նոր բարոյականությունը՝ ոչնչացնելով ազգային բանաստեղծի հոգևոր Հարստությունը՝ նրա գրադարանը:

Իսահակյանը, գրադարանի ավերման մասին ստացած լուրերից վրդովված, նամակներ է գրում Մոսկվա՝ միութենական Լուսժողովում Անատոլի Լուճաչարսկուն, և միգուցե Լուճաչարսկու միջնորդու-

թյունն է խանգարում, որ ոչ բոլոր գրքերը վաճառեն, այլ գոնե հանձնեն Մանկավարժական ինստիտուտին:

Սակայն Իսահակյանը չվհատվեց. տարազրույթյան տարիներին՝ 1911-1936 թթ., որտեղ էլ որ գտնվեց, հավաքեց իր գրադարանը: Հակիրճ այդ հավաքածուների մասին:

Տեղականությամբ ամենակարճ կանգառը Թուրքիան էր: Հայտնի էր, որ 1911-ի Հունիսին Իսահակյանն անլեգալ անցել էր ռուս-տաճկական սահմանը՝ ձեռքին մի փոքր պայուսակ, որտեղ ձեռագրերից միայն «Աբու Լալա Մահարու» ամբողջական տեքստն էր, որը և առաջին անգամ հրատարակվեց Կ. Պոլսում (տպարան «Հերմես», 1911): Այս քաղաքում բանաստեղծը մնում է մեկ տարի և քիչ գրքեր է հավաքած լինում, ստանում է նվեր արևմտահայ իր ընկեր բանաստեղծներից մի քանի ժողովածուներ, ձեռք է բերում Կ. Պոլիս հրատարակված մի քանի հնատիպ գրքեր և 1912 թվին մեկնում ժնև: Եվ երբ 1912 թվին Իսահակյանի կինը որդու հետ ժնև եկավ, իր հետ բերեց բանաստեղծի ձեռագրերը և հայրական տան գրադարանի երեք արկղ գրքեր, այդ թվում գրքեր, որոնք բանաստեղծը գնել էր Լայպցիգում տեղի համալսարանում սովորելու շրջանում, ինչպես նաև Բեռլինում, Մոսկվայում, Թիֆլիսում, և այդ գրքերի մեջ 1666 թվականին Ոսկան Երեանցու հրատարակած Աստվածաշունչը:

Այնպես որ Իսահակյանի գրադարանի մի կարևոր մասի փրկություն համար մենք պարտական ենք նրա տիկնոջը, երիտասարդ, կրթված, գրքի գինն իմացող այն տիկնոջը, որ ապագա հեղափոխության բողոքից փրկեց բանաստեղծի ձեռագրերը և նվիրական գրքերի հույժ կարևոր մի մասը:

Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ Գերմանիա, Շվեյցարիա, Իտալիա և Ֆրանսիա: Ի՞նչն էր շատ այստեղ՝ գիրքը, և ի՞նչն էր քիչ այստեղ՝ այդ գրքերը ձեռք բերելու միջոցները: Ես մի վայրկյան իսկ չեմ կասկածում, որ եթե Իսահակյանը մեծահարուստ լիներ, նա կունենար իր ժամանակի ամենաչքեղ գրադարաններից մեկը:

Սակայն իր հնարավորությունների ներածին չափով նա այս երկրներում էլ աննկուն կերպով շարունակեց հավաքել իր գրադարանը: Նա մշտական ծարավ ուներ գրքի հանդեպ: Երբ իմանում էր, որ մի նոր հետաքրքիր գիրք է տպվել Բեռլինում կամ Փարիզում, Վենետիկում կամ Երևանում, գրում էր իր ընկերներին, խնդ-

րում, որ այդ գիրքն իրեն ուղարկեն և նույն բարեխղճությամբ գրքի արժեքն էլ նամակի հետ էր ուղարկում: Ավելի մեծ ուրախություն չկար նրա համար, քան երբ գտնում էր փնտրված գիրքը, և ավելի մեծ նվեր չկար նրա համար, քան գիրքը:

Բեռլինում ապրած շրջանում նա հարստացրեց իր գրադարանը առաջին Հերթին Գերմանիայի մեծ բանաստեղծներին՝ Գյոթեի, Հայնեի, Շիլլերի, Լեհաուերի և մեծ փիլիսոփաներին՝ Հեգելի, Կանտի, Շոպենհաուերի, Նիցշեի, Շտրեների երկերի ժողովածուներով: Ի դեպ, այսօր Վարպետի տուն-թանգարանի հավաքածուում կարելի է գտնել այդ գրքերի մի զգալի մասը:

Ընդամին գրքեր կան գերմաներեն թվագրված՝ Լայպցիգ 1893-1895 թթ.: Ինչ ճանապարհներ չեն անցել այդ գրքերը, մինչև որ եկել հանգրվանել են բանաստեղծի թանգարանում: Սակայն 1914 թ. Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո, երբ Իսահակյանը ճարահատյալ Գերմանիայից մեկնում է չեզոք երկիր՝ Շվեյցարիա, նա իր գրքերի մեծ մասը թողնում է իր ընկեր Վահան Զաքարյանի տանը, և հետագայում՝ մինչև 7-8 տարի անց, նա հետաքրքրվում է իր թողած գրքերի վիճակով: Թե ինչ եղավ այդ գրադարանի հետագա ճակատագիրը, դժվար է միանշանակ ասել. արդյո՞ք Իսահակյանը լրիվ բերեց իր գրքերը Բեռլինից: Հայ զինվորներին մեկը, որ 1945 թ. մտել էր Բեռլին, պատմել է ինձ որ մի հայ ծերունի տարել է իրենց տուն, ցույց տվել իր հարուստ գրադարանը և պատմել, թե իր մոտ գտնվում են գրքեր, որոնք պատկանելիս են եղել Ավետիք Իսահակյանին: Համենայն դեպս անհրաժեշտ է կատարել ինչ-որ քննություն, փորձել որոնել Իսահակյանի գրքերը եվրոպական հայտնի և անհայտ հասցեներով:

Իսահակյանը 1914-1920 թթ. ապրել է պատերազմի մեջ մխրճված Եվրոպայի երեւի ամենամանդորր երկրում՝ Շվեյցարիայում՝ Ժնևում: Այստեղ, Հիրալի, լավ հնարավորություն է ունեցել համալրել գրադարանը իր հավաքած գրքերով: Ի դեպ, պետք է ասել, որ բանաստեղծը հենց այնպես՝ հանուն զեղեցիկ կազմի, արտաքին տեսքի, երբեք գիրք չի գնել: Նա առաջին Հերթին հավաքել է գրքեր, որոնք իրեն պետք էին, պետք էին իր աշխատանքի ընդլրթով, իր հետաքրքրությունների առումով: Դրանք՝ որպես օրենք, մեծ բանաստեղծների ստեղծագործություններ են, փիլիսոփայական ընդլրթի գրքեր: Բանաստեղծը հատուկ սեր է տածել նաև կրոնա-

կան, հոգևոր բնույթի գրքերի նկատմամբ. Աստվածաշունչ, Ավետարան, Սաղմոս, Ճաշոց՝ մի առանձին գուրգուրանքով է դրանք հավաքել: Հատ որում նա իր հավաքածուում ունի Աստվածաշնչի հրատարակութուններ մի քանի լեզվով՝ գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն: Իսահակյանը սիրահար էր նաև գիտական գրքերի, մեծ գիտնականների մենագրությունների, ճարտարապետական, աշխարհագրական, լեզվաբանական հետազոտություններ, կարևոր տեղեկագրերի, բայց առավել շատ բառարանների՝ թե՛ բացատրական, թե՛ տարբեր լեզուների: Նրա հավաքածուների հպարտություններից են, Իհարկե, Մխիթար Սեբաստացու հրատարակած «Նոր բառարան հայկական լեզվի» երկհատոր վեհաշուք, կոթողային գիրքը, որը Իսահակյանի ընթերցանության մշտական առարկան էր, և նրա կողքին վենետիկյան տպագրության հայտնի Առձեռն բառարանները, Աճառյանի հոյակերտ «Արմատական բառարանը» (6 հատորով), Ստ. Մալխասյանցի «Հայերեն լեզվի բացատրական բառարանը»՝ քառահատոր հիմնարար աշխատանքը:

Իսահակյանը կարող էր ժամերով բառարան կարդալ. դա կարծես ներքին անհրաժեշտություն էր նրա համար, ինչպես և օտար լեզուների բառարանները, որոնց օգնությամբ ինքը հղկում-բարեկալում էր իր գիտցած լեզուները:

Երիտասարդ բանաստեղծը դեռևս 1895 թ. Լայպցիգից գրում է Վիեննա՝ Հայր Արիստակես Վարդանյանին, և խնդրում իրեն ուղարկել Վիեննայի Մխիթարյանների Հայր Ավետիք Կոյլավյանի «Բառգիրք գերմաներեն-հայերեն»-ը, որը լույս է տեսել Վիեննայում 1884 թվին: Տասից ավելի միայն հայ-գերմաներեն և գերմաներեն-հայերեն բառարաններ ուներ իր հավաքածուում: Նույնը ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն լեզուների վերաբերյալ:

Իսկ երբ 1920 թվականին բանաստեղծը բնակություն հաստատեց Վենետիկում՝ Սուրբ Ղազար կղզու հարևանությամբ, կարող ենք ասել, որ բանաստեղծի կյանքի յուրաքանչյուր օրը 1920-1926 թվականներին կապվեց Մխիթարյան միաբանության՝ Հայապահպանության Համաեվրոպական այս կարևորագույն կենտրոնի հետ, որի գործունեությունը հայ գրքի հրատարակության ասպարեզում բացառիկ է:

Գրքի պաշտամունք ունեցող Իսահակյանի համար Ս. Ղազարը՝ Մխիթարյան միաբանության դպրավանքը՝ իր նշանավոր տպագ-

րատնով, Հայոց ձեռագրերի և գրքերի հավաքանիով, այն մշտական փարոսն էր, որին եվրոպական տարագրության տարիներին միշտ ձգտել է իսահակյանը: Եվ վերջապես, նա Վենետիկում ոչ թե մի քանի օրով եկած անապարող Հյուր էր, այլ ճակատագրի բերումով այս «անընթաց քաղաքի» Dorsoduro 2266 տան բնակիչ: Իսկ բանաստեղծի միակ զավակը՝ Վիգենը, դառնում է տեղի Մուրադ Ռաֆայելյան հոգևոր դպրոցի սան:

1911 թվից ի վեր օտարության մեջ ապրող բանաստեղծին անհնար է, որ Տիրոջ կամքը մի տեղական ժամանակ չկապեր այս որքան ունալ, այնքան անիրական քաղաքի հետ: Անշուշտ սա վերին նախախնամության արդյունք էր: Եվ այս ճակատագրային գործընթացի մեջ վճռորոշ դեր ունեւր հենց Սուրբ Ղազարը՝ իր բացառիկ հարուստ անցյալով և իր մագնիսական դաշտի պես ձգողական ուժ ունեցող ներկայով: Մենք այստեղ կփորձենք հակիրճ խոսել բանաստեղծի հոգեկան աշխարհի վրա Վենետիկի հրատարակած գրքերի թողած մոգական ազդեցության մասին: Քանզի վենետիկյան Հայատառ գիրքը՝ հրատարակված 1700-ականներից, ոչ միայն սովորական գիրք հասկացողություն է, այլ խորհրդանշւ Հայ հոգու, Հայ պատմության, գրքի հրատարակման բարձր արվեստի, եզակի ճաշակի, անկրկնելի մշակույթի: Սա մի ուրույն որակ էր, գրահրատարակման դպրոց՝ իր նմանակը չունեցող: Ս. Ղազարի տպարանում, թե ձեռագրատանը, թանգարանի սրահներում, թե գրադարանում, ամենուրեք նա շոշափելի ձևով զգում էր այն հրաշակերտ ու արարիչ մթնոլորտը, որն ահա երկուհարյուրամյակից աճել լույս ու հոգևոր սնունդ է տվել Հայ աշխարհին:

Մինչև Վենետիկում բնակություն հաստատելը իսահակյանը նպատակամղված ձևով սկսել էր հավաքել Ս. Ղազարում Մխիթարյան միաբանության հրատարակած գրքերը: Նրա համար մխիթարյան հնատիպ ամեն մի գրքի ձեռքբերումը մի փոքրիկ տոն էր: Մխիթարյան Հայրերը վկայում են, որ Վենետիկում ապրած տարիներին Համարյա ամեն օր իսահակյանը լինում էր Ս. Ղազարում՝ Հայության բուլբուլ իր մեջ հրաշքով վերակերտած այս կղզյակում: Նա գոց գիտեր բոլոր Հին ձեռագրերը և գրքերը, որոնք պահվում էին կղզու ձեռագրատանը:

Անշուշտ իսահակյանը պատիվ կհամարեր մեկ գիրք էլ տեսնել իր երկերից՝ հրատարակված Ս. Ղազարի խորհրդանշանով: Թեկուզ

ոչ մեծ, թեկուզ ոչ ծավալուն, թեկուզ համեստ ու գողտրիկ: Ավել ինչ կարող էր սպասել վտարանդի պոետը՝ թեկուզ մեծ, թեկուզ եզակի, թեկուզ հանճարեղ... Դյուերին չէր, սակայն Մխիթարյան միաբանության մականիշի տակ նա տպագրեց նույն տարում երկու գիրք՝ մեկը՝ «Սասնա Մհերը» (Վինենա), մյուսը՝ «Անան ծաղիկները» (Վենետիկ): Անան ծաղիկներ, որոնք խորհրդանշում էին Խաչակյանի հրաժեշտի աշունը Եվրոպային. չէ՞ որ նա շուտով պիտի հայրենիք վերադառնար:

Հայրենիք վերադարձի առաջին իսկ օրերին նա, բնականաբար, եղավ իր ծննդավայրում՝ Ալեքսանդրապոլ-Գյումրիում: Եվ սոսկումով տեսավ, թե ինչ ավերածության է ենթարկվել իր այնքան սիրելի գրադարանը՝ պատանի օրերի իր ոգևորումների ու հիասթափությունների, խանդավառումների ու արարումների հիմնական ակունքներից մեկը: Եվ երեք հազարի հասնող գրքերի հավաքածուից անգամ մեկ գիրք չընկավ նրա ձեռքը:

Տարագրության շրջանի վերջին տարիները՝ 1930-1936 թթ., Խաչակյանն անցկացրեց Ֆրանսիայում: Եվ հարկ է նշել, որ քառորդ դար ապրելով Արևմտյան Եվրոպայի երկրներում՝ նա ազատ տիրապետել է իտալերենին և ֆրանսերենին (գերմաներեն գիտեր տակավին էջմիածնի ճեմարանից): Ուստի և նրա գրադարանը, նրա ընթերցանության սահմանները ընդլայնվել էին մեծապես: Հայերեն, ռուսերեն և գերմաներեն գրքերի կողքին այնտեղ տեղ են գտնում հին ու նոր իտալերեն և ֆրանսերեն գրքերը: Նա բնագրով է կարդում Դանթեի «Աստվածային կատակերգությունը», Պետրարկայի սոնետները, Բալզակի, Ստենդալի, Հյուգոյի, Զոլայի վեպերը: Սակայն Խաչակյանի հետաքրքրությունը երբեք չի սահմանափակվել գեղարվեստական գրականության և կամ թե փիլիսոփայական երկերի աշխարհով: Խաչակյանը մեծ հետաքրքրություն է տածել լեզուների, մարդկության անցյալի՝ Հին Արևելքի և Հին Հունաստանի ու Հռոմի մշակույթի ու պատմության, աշխարհագրության, գիտությունների նոր ճյուղերի (Խաչակյանի օրոք հալածված)՝ գենետիկայի, կիբեռնետիկայի, բժշկագիտության նոր ուղղությունների հանդեպ:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը հավաստում էր, որ Խաչակյանը լայն գիտելիքներ ուներ աստղագիտության բնագավառում, մեծ սրտաբան Լեոն Հովհաննիսյանը փաստում էր նույնը

բժշկագիտության ասպարեզում, Թորամանյանը հիացած էր բանաստեղծի՝ Հայ ճարտարապետության խոր ճանաչումով...

Միանգամայն հասկանալի է, որ Իսահակյանը առանձնակի հետաքրքրություն էր տածում Հայոց պատմության և նրա ողբերգական փուլի՝ Հայոց հարցի հանդեպ: Թե՛ Իտալիայում, թե՛ Ֆրանսիայում նա հատուկ հավաքել է գրքեր Հայոց հարցի, Հայոց եղեռնի վերաբերյալ, գրքեր, որոնք անհրաժեշտ էին լինելու իր՝ նոր պետականություն կառուցող ժողովրդին:

Եվ երբ 1936 թվին Իսահակյանը որոշում կայացրեց՝ ընդմիշտ ընտանիքով վերադառնալ Հայրենիք, նա Հայոց պատմության, Հայոց հարցի վերաբերյալ, ինչպես և այլ բնույթի գրքեր՝ 22 արկղ զիրք, նվիրաբերեց Խորհրդային Հայաստանի Ալեքսանդր Մյասնիկյանի անունը կրող Հանրային գրադարանին:

Առանձին ուսումնասիրության նյութ է այսօր ազգային գրադարանի պահոցներում գտնել Իսահակյանի նվիրաբերած գրքերը (եթե միայն դրանք պահպանվել են 1937 և 1949 թվականների գտումներից հետո), դասդասել դրանք և հավաքել նրա անվանական ֆոնդում:

Իսահակյանի գրադարանն իր վերջին հանգրվանը գտավ Երևանի՝ Պլեխանովի թիվ 32 տանը, որտեղ 1946-1957 թթ. իր կյանքի վերջին տասնամյակն ապրեց բանաստեղծը: Գրքերի թիվն այստեղ հասնում է յոթ հազարի, և այդ գրադարանը նույն հասցեով արդեն շուրջ 40 տարի գործող տուն-թանգարանի հպարտությունն է:

Վաղուց իր աշխատասենյակի դուռը չի բացել բանաստեղծը, չի մոտեցել իր գրադարաններին, սակայն նրա գրքերը դեռևս պահում են բանաստեղծի մատների ջերմությունը և իրենց իմաստուն էջերից արտացոլում Վարպետի իմաստուն հայացքը...